

Սուրբ Հոգիին Ներգործությունը՝ Լոյսի Ճանապարհի դէպի Աստուած

Ս. Գրիգոր Տաթևացին հետևեալ կերպ կը բացատրէ Ս. Հոգիին էջքը յիսուներորդ օրը պատահելու մասին. ”Յիսուն օրը եօթը շաբաթ է՝ մէկ օրով աւելի, և, ըստ Ս. Գրիգոր Աստուածաբանի, եօթը կը խորհրդանշէ այս կեանքի եօթ դարերը, իսկ ութերորդը՝ հանդերձեալ կեանքի անվախճան Օրը, որ մէկ է և անքակտելի, միաբուն (*միասնական*) և աներէկ (*գիշեր չունեցող, մշտական ցերեկ*) ըլլալով անբողջութիւնը միեդէն աշխարհի՝”: Ըստ Տաթևացուն, Ս. Հոգիին գալուստը Քրիստոսի յարութենէն եօթ շաբաթ յետոյ, կը խորհրդանշէ ”Ս. Հոգու եօթնարփեան շնորհները՝ իմաստութիւն, գիտութիւն, զօրութիւն, հանճար, խորհուրդ, աստուածպաշտութիւն և երկիրդ, որոնք տրուեցան առաքեալներուն”: Եռամեծ Վարդապետի ուսմունքին արձագանգը կը կարդանք Եսայի Մարգարէին մօտ, ուր ան կ’ըսէ, ”Յեսսէի արմատէն գավազան պիտի ընձիւղուի, ճիւղ պիտի աճի այն արմատէն. անոր վրայ պիտի հանգչի Աստուծոյ հոգին, իմաստութեան և հանճարի հոգին, խորհուրդի և զօրութեան հոգին, գիտութեան և Տիրոջ երկիրդի հոգին” (*Եսայի 4:21*):

Երանելի Ներսէս Լամբրոնացին Ս. Հոգու գալստեան նուիրուած իր Ներբողին մէջ կը խնդրէ, որ իրեն տան աշխարհին տրուած շնորհները, որպէսզի ինքն անվեհերութեամբ ընթանայ Աստուծոյ գիտութեան իմաստներու խորքերը և սեղանաւոր ըլլայ հոգիները պարարտացնող անապական կերակուրին: Ան կը հարցնէ թէ, ”Ո՞վ չի յուսար Ս. Հոգիին պարգևները վայելել, քանզի Ան յագեցուց մարդկանց Իր անճատ խորհուրդներու գիտութեամբ”: Ան իր հարցումին պատասխանը հաստատելով կը գրէ, ”Ո՞վ է այս շնորհի միջնորդն ու մատակարարը, ուրիշ ո՞վ, եթէ ոչ մեր Տէր Յիսուս Քրիստոսը՝ կեանքը, լոյսը, ճանապարհը, դուռը, հիվիւր, քահանայապետը, միջնորդը, բարեխօսը, յոյսը, կարապետը”:

Մեծ Վարդապետը կը յորդորէ ըսելով, ”Թախծութեան զգեստը որ Ադամէն ժառանգեցինք, հեռացնենք մեզմէ, որովհետև նոր Ադամը մեզի զարդարեց ոսկեհուռ պաճուճանքով և պսակներով”: Հաւատքի ամենախորին հաւաստիացումով Երանելին ընթերցողին կ’ընծայէ իր վարդապետութիւնը և Ս. Հոգու գալստեան ու ներգործութեան մասին կը գրէ հետևեալը. ”Այսօր սքանչելի հուրը, երկնաւոր բոցաճաճանչ նշոյլներով արտափայլելով երկրի վրայ, բորբոքուելով կիզեց մարկանց մէջէն անէծքի մեղքի փուշն ու սաստիկ պատիժները: Այսօր Հոգու քաղցր ցօղի սաստիկ հնչիւնը որոտաց երկրի վրայ, և անէծքի բարբառը, որը Ադամի պատճառով շարժուեցաւ անոր վրայ, օրհնութեամբ փոխանակուեցաւ”:

Լամբրոնացին կ'ուսուցանէ ըսելով, թէ Աստուծոյ իմաստութեան գանձերը պէտք է սիրտի շտեմարաններուն մէջ պահել, և նախ՝ սիրտով արդարութեան հաւատալ և ապա՝ բերանով փրկութիւնը խոստովանիլ ...”Փրկագործութեան խորհուրդը զօրութեամբ չէ, այլ իրաւամբ և արդարութեամբ”։ Սքանչելախօս վարդապետը կը յիշեցնէ Փրկիչին խոստումը Իր առաքեալներուն թէ, ”Ես պիտի աղաչեմ Տօրը, և ան մէկ այլ Միտիթարիչ պիտի տայ ձեզի, որպէսզի յաւիտեան ձեզի հետ բնակի” (*Յով. 14:16*): Նաև Յիսուսի պատուիրանը Գալիլիայի մէջ թէ, ”Գացէք այսուհետև աշակերտ դարձուցէք բոլոր հեթանոսներուն, ...սորվեցուցէք անոնց այն ամէնը ինչ որ ես ձեզի պատուիրեցի” (*Մատթ. 28:18, 20*): Ներբողագիրը Քրիստոսի բերանով հրաման կ'ուղղէ Ս. Տոգիին ըսելով, ”Գնա՛, բնակուիր անոնց մէջ, ինչպէս որ խոստացայ, և վարդապետելով յիշեցուր անոնց իմ բոլոր ըսածներս”։ Ապա հեղինակը կը նկարագրէ, թէ ինչպէս Ս. Տոգին որոտնդոստ պլացաւ երկնայիններու մէջէն և եկաւ ու բնակեցաւ Քրիստոսի եկեղեցիին մէջ յաւիտենապէս։ ”Եւ ան, Ով եկաւ, այլևս չմեկնեցաւ, այլ մնաց Քրիստոսի եկեղեցիին մէջ՝ ըստ Իր Փեսայի անսուտ խոստումին, որ ըսաւ, ’Ձեզի հետ կը բնակի և ձեզի հետ կ'ըլլայ յաւիտեան՝ ”։

Ս. Մակար Մեծ, որ ապրած է անապատականութեան հիմնադիր Ս. Անտոն Մեծի օրերուն և եղած է անոր ժառանգորդը, կ'ըսէ, ”Ճշմարտապէս Քրիստոսին հաւատացող հոգիին հարկ է այժմեան արատաւոր վիճակէն անցնիլ այլ բարի վիճակի և այժմեան նուաստացած բնութիւնը փոխել աստուածային բնութեամբ և Ս. Տոգիին զօրութեան ներգործութեամբ դառնալ նոր էութիւն”։

Եգիպտոսի անապատականը ոչ միայն ընթրնած էր Ս. Տոգիին ներգործութեան զօրութիւնը, այլ նաև իր կեանքով ճշմարտապէս հետևած էր Տիրոջը, որպէսզի ժառանգէր Աստուծոյ արքայութիւնը։ Վանականը պարզ կերպով իր վարդապետութիւնը մարմնի ու հոգու մասին կը ներկայացնէ հետևեալ կերպ. ”Ինչպէս մարմինը մեռած է առանց հոգու և ոչինչ կրնայ ընել, նոյնպէս ալ հոգին առանց երկնային շունչի, առանց Աստուծոյ Տոգիին մեռած է արքայութեան համար և առանց Ս. Տոգիին չի կրնար ընել այն, ինչ որ աստուածային է”։ Ս. Պօղոս Առաքեալ Տոնմէացիներուն կը քարոզէր ըսելով, ”Ուրեմն եղբայրներ, մարմինին չէ որ պարտական ենք՝ ըստ մարմինին ապրելով. որովհետև եթէ ըստ մարմնի ապրիք, կը մեռնիք, իսկ եթէ Տոգիով մարմնին գործերը սպանէք, կ'ապրիք. քանզի անոնք որոնք կ'առաջնորդուին Աստուծոյ Տոգիով, անոնք են Աստուծոյ որդիներ։ Ապա և՛ ժառանգներ. ժառանգներ Աստուծոյ և ժառանգակիցներ Քրիստոսի” (*Տիմոթ. 8:12-14, 17*):

Տին Կտակարանի աւանդութիւնն ու օրէնքը հրեաներուն սորվեցուցած էր, որ իրենց Աստուծոյն պէտք է երկրպագէին Սիոնի լեռան վրայ կամ Երուսաղէմի մէջ. սակայն Քրիստոս, Սամարացի կնոջ հետ ունեցած Իր

խօսակցութեան ժամանակ յստակ կերպով կ'ըսէ, "Ով կին, հաւատայ ինձի, որ պիտի գայ ժամանակը, երբ ոչ այս լեռան վրայ և ոչ ալ Երուսաղէմի մէջ պիտի երկրպագեն Տօրը: Բայց պիտի գայ ժամանակը, և արդէն իսկ եկած է, երբ ճշմարիտ երկրպագուները պիտի երկրպագեն Տօրը հոգիով և ճշմարտութեամբ" (Յով. 4:21,23):

Երկրպագուն երբ հաղորդակցութեան մէջ պէտք է մտնէ Աստուծոյ հետ և իր հոգւոյն փրկութեան համար, ինչպէս անապատական սուրբը կ'ըսէ, "պէտք է դառնայ նոր էութիւն", ճշմարիտ կերպով իր հոգին պէտք է պատրաստէ իբրև բնակարան Սուրբ Հոգւոյն: Սրբագործուած և երկնային շունչով մաքրուած հոգիին մէջ է, որ Ս. Հոգին կը բնակի: Ս. Բարսեղ Կեսարացին կ'ուսուցանէ, "Արդարև Ս. Հոգին բնակարան է սուրբերու համար, և սուրբը յարմարաւէտ օթևան է Ս. Հոգիին, որովհետև անիկա տուն պատրաստած է Աստուծոյ համար": Իսկ Նեթանուսաց Առաքեալը պիտի ըսէր, "Եթէ ո՞չ գիտէք՝ զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյ Սրբոյ որ է ի ձեզ՝ գոր ունիքն յԱստուծոյ" (1 Կորնթ. 6:19):

Հոգևոր խաղաղութիւնը մէկ ուրիշ գօրութիւն մըն է, որ կրնայ երկրպագողի հոգւոյն ու միտքին պայծառութիւն ու անդորրութիւն հաղորդել, որպէսզի աղօթասացը ապականութենէ անցնի դէպի փրկութիւն և զգենու Աստուծոյ զիտութեան լոյսը և ստանայ, ինչպէս Ս. Մակար կ'ըսէ, "Տիրոջ անսահման ողորմածութիւնն ու Ս. Հոգու շնորհի բարեգթութիւնը":

Հոգևոր կեանքի կառուցումը քրիստոնեային հեռու կը պահէ թուլամորթութենէ, անկեալութենէ և ամէն տեսակի խաւար միտքերէ:

Ս. Անտոն Անապատականը վկայելով անձի ներքին շինութեան կարևորութեան մասին, կ'ըսէ, "Մտքի շինութիւնը մարմնաւոր ճգնութիւններէն առաւել է, քանզի մտքի ներքին շինութիւնը վանականի հոգին կ'ուղղէ դէպի Աստուծոյ կատարելագոյն սիրոյն, որը անոր արժանի կը դարձնէ Աստուծոյ փառքի տեսութեան և յայտնութիւններու": Ճգնաւորը կը բացատրէ ըսելով, թէ "Մարմնաւոր սխրագործութիւնները վանականին կ'ազատեն մարմնաւոր կիրքերէն, և առաքինութիւններու մէջ կը հաստատեն անոր, գօրութիւն կու տան ցանկութիւնները վանելու և մարմինին մաքրութիւն կը պարզեն: Իսկ միտքին սխրագործութիւնները հոգին կը զինեն դէտրու և անոնց խորհուրդներուն դէմ և սիրտին կու տան մաքրութիւն, որը անրութիւն կ'ստանայ սերէն և կ'արժանանայ Ս. Հոգիին կատարման":

Արդարև վերոյիշեալ սուրբերուն վարդապետութիւնը ցոյց կու տայ, թէ դէպի արքայութիւն առաջնորդող ճանապարհը ինչպիսի հանգրուաններէ կ'անցնի հոգևոր ճամբորդին միտքն ու հոգին պատրաստելու համար, և երբ սրբութեան ու մաքրութեան հասնի՝ կը յանձնուի Ս. Հոգիին իբրև տաճար Աստուծոյ և բնակարան Հոգւոյն Սրբոյ:

Անտիոքի Ս. Իգնատիոս Եպիսկոպոսը, իր բոլոր առաքինություններով հանդերձ, երբ ամբողջ մարմինով ու հոգիով կը պատրաստուի նահատակութեան, հոռմէացիներուն ուղղուած իր նամակին մէջ կը գրէ հետևեալը, "Աղօթեցէք, որպէսզի ես հոգիի ու մարմնի գորութիւն ունենամ, որ ոչ միայն խօսիմ (նահատակութեան մասին), այլ ճշմարտապէս ցանկանամ: Ես չեմ ուզէր պարզապէս քրիստոնեայ կոչուիլ, այլ կը ցանկան իրապէս ըլլալ: Աղօթեցէք ինձի համար Քրիստոսին, որպէսզի Աստուծոյ գոհը դառնամ": Պօղոս առաքեալի խօսքը արձագանգելով, թէ "Եղէք նմանակից Աստուծոյ" (*Եփես. 5:1*), Ս. Իգնատիոսը նոյնպէս կը գրէ ըսելով, "Չգեցէք որ (նմանակից ըլլամ) կրկնեմ իմ Աստուծոյ Չարչարանքները: Բայց եթէ չարչարուիմ - կ'աւելցնէ սուրբը - պիտի ազատագրուիմ Յիսուս Քրիստոսի միջոցաւ և իրեն պիտի միանամ ու պիտի յառնեմ ազատութեան":

Կաձէք առաջին դարերու սուրբերը, գուցէ ժամանակի իմաստով Քրիստոսին աւելի մօտ ըլլալուն պատճառաւ, և միաժամանակ հեթանոս կայսրերու դաժան հալածանքներուն ենթարկուելով՝ հոգեպէս աւելի կը բիրեղանային և Ս. Տոբոյն շնորհներովը առաւել ևս քան զես կը գոտեպնդուէին և զչարսն յաղթելով ու նեղութեանց համբերելով, նահատակութիւնը իբրև երկնքի արքայութեան պսակ կ'ընդունէին:

Արդարութիւնն ու հաւատքը իբրև լոյսի ճանապարհներ, մէկ անգամ ևս կը շեշտուին Ս. Փոլիկարպոսին կողմէ Փիլիպեցիներուն ուղղուած իր նամակին մէջ. սուրբը կը խրատէ անոնց որ "հնագանդ մնան արդարութեան խօսքին և համբերութեանը հարատեւն, ինչպէս Պօղոս Առաքեալ և միւս առաքեալները, որոնք ունայն պատճառներով Տիրոջ չարչարանքներուն մէջ բաժին չունեցան, այլ Քրիստոսին միացան հաւատքի ու արդարութեան ճանապարհով": Պօղոս Առաքեալ կը վկայէ ըսելով, "Յիշէ մեռելներէն յարութիւն առած Յիսուս Քրիստոսին, ...որուն համար կը չարչարուիմ և շղթայուած եմ ...բայց Աստուծոյ խօսքը շղթայուած չէ: Անոր համար ամէն ինչի կը համբերեմ ընտրեալներու սիրոյն, որպէսզի անոնք ալ հասնին փրկութեան և երկնային փառքին, որ Քրիստոս Յիսուսի միջոցաւ է" (*2 Տիմ. 2:9, 10*):

Զմիւռնայի Եպիսկոպոսը Փիլիպեցիներուն կը յիշեցնէ հեթանոսաց Առաքեալի ուսուցումը, թէ "Ան իր ժամանակի սերունդին դէմ հանդիման սորվեցուց 'Աստուծոյ խօսքը' (*Փիլիպ. 1:14*) հաւատքով և յոյսով և առաջնորդեց սիրով դէպի Աստուած և Քրիստոս": Եպիսկոպոսը կ'աւելցնէ ըսելով, "Ան որ սիրով սոգորուած է, հեռու է մեղքէ": Իսկ Առաքեալը կոչ կ'ուղղէ Կորնթոսի քրիստոնեայ համայնքին զինուիլ "Սրբութեանը, զիտութեանը, համբերութեանը, քաղցրութեանը, Սուրբ Տոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութեան խօսքով, Աստուծոյ գորութեանը և արդարութեան զենքով" (*2 Կորնթ. 6:6-7*):

Լերան Քարոզին մէջ Յիսուս խօսելով արդարութեան մասին, կ'ըսէ, "Երանի անոնց, որ քաղց և ծարաւ ունին արդարութեան, որովհետև անոնք պիտի յագենան" (Մատթ. 5:6): Արդարութեան ճանապարհը, սակայն, դիւրին ճանապարհ մը չէ: Եկեղեցւոյ սուրբ հայրերը իրենց կեանքի բարձրագոյն առաքելութիւնը համարեցին քարոզել ճշմարիտ խօսքի և արդարութեան մասին, և այդ իսկ պատճառաւ նահատակութիւն վաստակեցին՝ յաւիտենականը ժառանգելու համար:

Անանիա Նարեկացին "Վասն Անցաւոր Աշխարհիս" խրատին մէջ կը գրէ, "Անուշ ըմպելիներով և կերակուրներով մի յագենար: Զգեստներով մի պաճուճուի իբրև թերահաւատ, որոնք յարութեան չեն հաւատար, այլ աջք դիր յաւիտենական կերակուրին և անապական զգեստին, և արհամարհէ երկրաւորը, որովհետև եթէ այս չարհամարհես, յաւիտենականը չես ժառանգէր": Նարեկացին այս ժամանակը կը նմանեցնէ օթևանող անցաւորի մը, որ գիշերը կ'օթևանէ, իսկ առաւօտեան իր ճանապարհը կը մեկնի: Մեծ վարդապետը կը խրատէ աղաչելով, "Արդ, աղաչեմ, փութացարուք մտանել յաւիտենական ուրախութիւնսն, ուրասցուք զառժամանակեայ անցաւորս, զի եթէ զայս ոչ ուրանամք՝ զայն ոչ ժառանգենք":

Ս. Կղեմէս Ալեքսանդրացին կորնթացիներուն ուղղուած իր Առաջին նամակին մէջ հոգու խոնարհութեան մասին գրելով կը յիշեցնէ անոնց ըսելով, "Պէտք է ի մտի ունենանք յատկապէս Տիրոջ Յիսուսի խօսքերը, երբ Ան կ'ուսուցանէր բարութիւն, համբերութիւն և հարատևութիւն: Այս էր Տիրոջ պատգամը. ողորմեցէք և դուք ողորմութիւն պիտի գտնէք. ներեցէք և պիտի ներուիք. այն ինչ որ ուրիշներուն կ'ընէք, նոյնը ձեզի պիտի ընեն. ինչ որ տաք, ձեզի նոյնը պիտի տան. ինչպէս որ դատէք, նոյն ձևով պիտի դատուիք. որչափ որ բարի ըլլաք, նոյնչափ բարութիւն ձեզի ցոյց պիտի տան. ինչ չափով որ չափէք, նոյն չափով պիտի չափուիք":

Ալեքսանդրացին և միւս սուրբ հայրերը խորին խոնարհութեամբ գիտակցեցան և ըմբռնեցին Տիրոջ պատգամները երկնքի արքայութեան, հոգու փրկութեան, յաւիտենական կեանքի, արդարութեան և ճշմարտութեան ճանապարհով միայն Աստուծոյ արքայութիւնը ժառանգելու իրականութիւնը: Անոնք զարդարուեցան անապական զգեստներով և յագեցան ճշմարիտ Խօսքի կերակուրով՝ Յիսուս Քրիստոսի մարմինով ու արեամբ: Սուրբ հայրերը ուրիշ բան չքարոզեցին, այլ միայն Աստուծոյ Խօսքը. և անոնցմէ շատեր նահատակութիւնը ընդունեցին, որպէսզի նմանակից ըլլան Տիրոջը և արքայութեան օթևաններուն մէջ անոնք իրենց արժանի տեղը վաստակեցին՝ արեան վկայութեամբ:

”Ճատ ի Սուրբ Վկայսն Քրիստոսի” (Ս. Յովհան Մանդակունի)

Նաւատովք տեսին, յուսով ընթացան, սիրով հասին:

Նաւատով նուիրեցան, յուսով ընթացան, սիրով պատարագեցին:

Նաւատով մխեցան, յուսով տանջեցան, սիրով վճարեցան:

Նաւատով հաստատեցան, յուսով փորձեցան, սիրով կատարեցան:

Տեսին և սիրեցին, ցանկացան և հասին, մեռան և պսակեցան:

Արդեամբք արդարացան, իրաւամբք փառաւորեցան, և մահուամբ պսակեցան:

Անարգեցան և պատուականացան, տանջեցան և մեծարեցան:

Իմաստութեամբ ընթացան, գիտութեամբ հասին, համբերութեամբ ժառանգեցին:

Վարդան Բեկյ. Ջուլֆայեան

- Աղբիւրներ

1 - Սուրբ Մակար Մեծ - *Խրատներ, Ս. Էջմիածին - 2007*

2 - Սուրբ Անտոն Մեծ - *Խրատներ, Ս. Էջմիածին - 2007*

3 - Սուրբ Յովհան Մանդակունի - *Նայ Գրողներ, Ն. Եսյս. Պողարեան, Երուսաղէմ - 1971*

4 - Ներսէս Լամբրոնացի - *Ներքող Ս. Նոզու Գալստեան Մասին, Գանձասար, 1993 - Դ*

5 - Անանիա Նարեկացի - *Կեանքը և Մատենագրութիւնը, Երեւան - 1986*

6 - Սուրբ Գրիգոր Տաթևացի - *Քարոզ Ս. Նոզու Գալստեան Մասին, Գանձասար, 1995*

7 - St. Basil the Great - *On The Holy Spirit, SVS - 1980*

8 - St. Ignatius of Antioch - *Early Christian Fathers, C. Richardson - 1970*

9 - St. Polycarp of Smyrna - *Early Christian Fathers, C. Richardson - 1970*

10 - St. Clement of Alexandria - *Promise of Good Things, The Apostolic Fathers - 1993*